



ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

28 հունիսի 2017 թվականի թիվ 28-Ն
ք. Երևան

ԹՎԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՑԱՆՑԻ ՄԻՋՈՑՈՎ ՌԱԴԻՈԾՐԱԳՐԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դեկլարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 46-րդ հոդվածի 2-րդ մասի և «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը **որոշեց**.

1. Հաստատել թվային հեռարձակման ցանցի միջոցով ռադիոծրագրերի հեռարձակման լիցենզավորման մրցույթի անցկացման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2. Հաստատել ռադիոծրագրերի հեռարձակման լիցենզիայի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Գ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆ

2017թ. հունիսի 28
ք. Երևան

Հավելված N 1
Հաստատված է
Հեռուստատեսության և ռադիոյի ազգային
հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 28 -ի
թիվ 28-Ն որոշմամբ

ԿԱՐԳ

ԹՎԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ՑԱՆՑԻ ՄԻՋՈՑՈՎ ՈԱԴԻՈԾՐԱԳՐԵՐԻ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է թվային հեռարձակման ցանցի միջոցով ռադիոծրագրերի հեռարձակման լիցենզավորման նպատակով կազմակերպվող և անցկացվող մրցույթի իրականացման ընթացակարգը:

2. Թվային հեռարձակման ցանցի միջոցով ռադիոծրագրերի հեռարձակման լիցենզավորման մրցույթն (այսուհետ՝ մրցույթ) անցկացնում է Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և սույն կարգի համաձայն:

3. Ռադիոծրագրերի հեռարձակման լիցենզիայի գործողության ժամկետը լրանալուց վեց ամիս առաջ Հանձնաժողովը հայտարարում է լիցենզավորման մրցույթ, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

4. Մրցույթին մասնակցում են միայն իրավաբանական անձինք:

5. Մրցույթն անցկացվում է հրապարակային կարգով:

II. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄԸ

6. Հանձնաժողովն իր որոշմամբ հայտարարում է մրցույթ:

7. Մրցույթի մասին տեղեկատվությունը Հանձնաժողովը հրապարակում է www.azdarar.am Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում և իր՝ www.tvradio.am պաշտոնական ինտերնետային կայքում:

8. Մրցույթի մասին տեղեկատվությունը պետք է ներառի հետևյալը՝

- 1) լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը,
- 2) ռադիոծրագրի թեմատիկ ուղղվածությունը,
- 3) սփռման տարածքը,
- 4) անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը,
- 5) հայտերի ընդունման ժամանակահատվածը և վայրը,
- 6) լրացուցիչ տեղեկություններ ստանալու աղբյուրը՝ հեռախոս, էլ. փոստ,
- 7) հայտի ձևը:

III. ՀԱՅՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

9. Մրցույթին մասնակցելու համար ներկայացվում է թվային հեռարձակման ցանցի միջոցով ռադիոծրագրի հեռարձակման լիցենզավորման մրցույթին մասնակցելու հայտ (այսուհետ՝ հայտ)՝ համաձայն N1 ձևի և անհրաժեշտ փաստաթղթեր:

10. Հայտում պետք է նշվեն հետևյալ տեղեկությունները՝

- 1) հայտ ներկայացնողի անվանումը,
- 2) գտնվելու վայրը,
- 3) ռադիոծրագրի թեմատիկ ուղղվածությունը,
- 4) սփռման տարածքը,

5) տեղեկություններ հայտ ներկայացնողի՝ այլ հեռուստառադիոընկերությունների հիմնադիր և լիցենզավորված անձ կամ զանգվածային լրատվության այլ միջոցների հիմնադիր լինելու, ինչպես նաև դրանց արտադրությամբ և տարածմամբ զբաղվելու մասին,

6) սեփական և հայրենական արտադրության հաղորդումների ծավալը,

7) հայտի ներկայացման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը:

11. Հայտին կցվում են ընկերության հիմնադիր փաստաթղթերի և իրավաբանական անձի կարգավիճակը հաստատող փաստաթղթերի պատճենները, ռադիոընկերության բիզնես ծրագիրը, տվյալներ օգտագործվելիք տեխնիկական միջոցների և սարքավորումների մասին, ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթեր, տեղեկություններ աշխատակազմի թվաքանակի, նրանց կրթության և մասնագիտական պատրաստվածության մասին, ինչպես նաև մրցույթին մասնակցելու համար «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափով վճարված պետական տուրքի անդորրագիրը:

12. Հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը Հանձնաժողով է ներկայացվում մրցույթի մասին տեղեկատվությունը հրապարակելու օրվանից հետո՝ 40-օրյա ժամկետում, առձեռն կամ փոստով: Ռադիոընկերության բիզնես ծրագիրը, օգտագործվելիք տեխնիկական միջոցների և սարքավորումների մասին տվյալները, ֆինանսական աղբյուրները հիմնավորող փաստաթղթերը, աշխատակազմի թվաքանակի, նրանց կրթության և մասնագիտական պատրաստվածության մասին տեղեկությունները ներկայացվում են երկու փաթեթով՝ թելակարված, համարակալված, «Բաղկացած է ... թերթից» գրառմամբ, ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում): Հայտին կից փաստաթղթերը ներկայացվում են փակ ծրարով՝ ստորագրված և կնքված (կնիքի առկայության դեպքում):

IV. ՀԱՅՏԵՐԻ ԶՆՆԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

13. Հանձնաժողովը մրցույթին մասնակցելու համար հայտերի ընդունման ժամկետի ավարտից հետո եռօրյա ժամկետում www.tvradio.am պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է մրցույթի մասնակիցների ցանկը:

14. Մրցույթի մասնակիցների հայտերը և կից փաստաթղթերը հրապարակվում են հանձնաժողովի դռնբաց նիստում՝ ըստ հայտերի գրանցման հերթականության, հայտերի ընդունման ժամկետի ավարտից հետո՝ 10-օրյա ժամկետում:

15. Հանձնաժողովը մասնակցին է տրամադրում հայտը և կից փաստաթղթերը՝ փակ ծրարով: Հայտի բովանդակությունը ներկայացնելու համար մասնակցին տրվում է 30 րոպե:

16. Հայտը քննության չի առնվում, եթե մասնակիցը չի ներկայացել Հանձնաժողովի նիստին և սույն կարգի 15-րդ կետի համաձայն չի ներկայացրել իր հայտի բովանդակությունը:

17. Հայտերի հրապարակումից հետո՝ դրանց ուսումնասիրման համար, Հանձնաժողովն ընդհատում է նիստը 10 օր տևողությամբ:

18. Հայտերի հրապարակումից հետո՝ 11-րդ օրը վերսկսվում է նիստը, որտեղ Հանձնաժողովը բաց վարկանիշային քվեարկությամբ կատարում է մրցույթում հաղթող մասնակցի ընտրությունը:

19. Վարկանիշային քվեարկությունից առաջ հանձնաժողովի անդամները հայտերի և կից փաստաթղթերի քննարկում չեն իրականացնում և չեն հրապարակում իրենց դիրքորոշումները դրանց վերաբերյալ, սակայն կարող են հանդես գալ հայտարարությամբ, միջնորդությամբ:

20. Վարկանիշային քվեարկությունն իրականացվում է ըստ մասնակիցների հայտերի գրանցման հերթականության: Քվեարկությունը կազմակերպվում է մասնակիցներից յուրաքանչյուրի համար առանձին, Հանձնաժողովի անդամների համաժամանակյա քվեարկությամբ: Համեմատելով տվյալ մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը, Հանձնաժողովի անդամը 0-10 ամբողջ թվերով գնահատում է մրցույթի յուրաքանչյուր մասնակցին: Վարկանիշային քվեարկության արդյունքում հաղթող է ճանաչվում գումարային առավելագույն միավոր ստացած մասնակիցը:

21. Հանձնաժողովը մասնակցին գնահատելիս հաշվի է առնում՝

- 1) սեփական արտադրության հաղորդումների գերակայությունը,
- 2) հայրենական արտադրության հաղորդումների գերակայությունը,
- 3) բիզնես ծրագրի հիմնավորվածությունը,
- 4) բազմակարծությունը խթանելու կարողությունը,
- 5) տեխնիկական և ֆինանսական հնարավորությունները,
- 6) աշխատակազմի մասնագիտական պատրաստվածությունը:

22. Մրցույթի ժամանակ այլ հավասար պայմանների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է՝

1) գործող այն ռադիոընկերություններին, որոնք իրենց գործունեության ընթացքում օրենսդրության խախտումներ թույլ չեն տվել:

2) գործող այն ռադիոընկերություններին, որոնք ռադիոհաղորդումների արտադրության և հեռարձակման բնագավառում ունեն առնվազն երեք տարվա փորձ:

23. Բվեարկության արդյունքում առավելագույն հավասար միավորներ ստացած և սույն կարգի 22-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի պահանջները բավարարած մասնակիցների միջև Հանձնաժողովը անցկացնում է վարկանիշային կրկնակի քվեարկություն:

24. Հանձնաժողովը մրցույթում հաղթող ճանաչելու և ռադիոծրագրի հեռարձակման լիցենզիա տալու որոշումը կայացնում է վարկանիշային քվեարկության արդյունքների հիման վրա՝ քվեարկությամբ:

25. Մրցույթում հաղթող ճանաչելու և ռադիոծրագրի հեռարձակման լիցենզիա տալու մասին Հանձնաժողովի որոշումը հրապարակվում է ընդունելուց անմիջապես հետո:

26. Հանձնաժողովի որոշումն ընդունելուց հետո երեք օրվա ընթացքում ուղարկվում է մրցույթի մասնակիցներին:

27. Մրցույթի մասին ամբողջական տեղեկատվությունը Հանձնաժողովը հրապարակում է իր պաշտոնական ինտերնետային կայքում՝ որոշումն ընդունելուց հետո 10-օրյա ժամկետում:

V. ՄՐՑՈՒՅԹԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼԸ

28. Հանձնաժողովն իր որոշմամբ մրցույթը հայտարարում է չկայացած, եթե՝

1) սահմանված ժամկետում ոչ մի հայտ չի ներկայացվել.

2) մասնակիցներից ոչ մեկը չի ներկայացել Հանձնաժողովի նիստին և սույն կարգի 15-րդ կետի համաձայն չի ներկայացրել իր հայտի բովանդակությունը:

3) ներկայացված հայտերից ոչ մեկը չի համապատասխանում ՀՀ օրենսդրության և սույն կարգի պահանջներին:

Ձև N 1
Թվային հեռարձակման ցանցի միջոցով
ռադիոծրագրերի հեռարձակման լիցենզավորման
մրցույթի անցկացման կարգի

Հեռուստատեսության և ռադիոյի
ազգային հանձնաժողովի նախագահ

_____ին
(անուն, ազգանուն)

Հ Ա Յ Տ

**Թվային հեռարձակման ցանցի միջոցով ռադիոծրագրի հեռարձակման
լիցենզավորման մրցույթին մասնակցելու**

Հայտատուի անվանումը

Գտնվելու վայրը

Հեռախոսահամարը, էլ. հասցեն

Ռադիոծրագրի թեմատիկ ուղղվածությունը

Սիռման

տարածքը

Տեղեկություններ հայտատուի՝ այլ հեռուստառադիոընկերությունների հիմնադիր և լիցենզավորված անձ
կամ զանգվածային լրատվության այլ միջոցների հիմնադիր լինելու, ինչպես նաև դրանց արտադրությամբ
և տարածմամբ զբաղվելու մասին

Սեփական արտադրության հաղորդումների ծավալը

Հայրենական արտադրության հաղորդումների ծավալը

Կից փաստաթղթեր՝ _____ թերթ:

Տնօրեն

(անուն, ազգանուն)

(ստորագրություն)

(օրը, ամիսը, տարեթիվը)

Կ.Տ. (կնիքի առկայության դեպքում)



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԼԻՑԵՆԶԻԱ _____

ք. _____

(լիցենզիան տալու օրը, ամիսը, տարեթիվը)

տրվում է

(իրավաբանական անձի անվանումը)

(գտնվելու վայրը)

գործունեության
տեսակը

սփռման տարածքը

լիցենզիայի գործողության
ժամկետը

ՀԵՌՈՒՄՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

(ստորագրություն)

Կ.Տ.

(անուն, ազգանուն)